մահ է: Որքան եւ իզուր թափոած լինէր մշակի քրտինքը, որքան եւ յուսահատական լինէր նրա դրութիւնը, դարձեալ նա կենդանի մարդ է, նա գործում է, նա պատերազմում է իր գոյութիւնը ոչնչացնող դժոարութիւնների հետ. նրա մէջ մեռած չէ ինքնապահպանութեան զօրութիւնը: Եւ այս՝ կեանքի եւ մահու կռոի մէջ՝ նա իրան պատրաստում է մի օրոայ համար, երբ կը տիրեն իրաւունքը եւ արդարութիւնը, երբ կ'ազատոի աղաների հարստահարութիւնից: Այն ժամանակ կը գայ մշակ մարդու արքայութիւնը, այն մարդու, որ գործ ունի արդար եւ հաւատարիմ բնութեան հետ, որ չէ մտածում իր նման մարդերի քրտինքից իր համար ապրուստ քամել...

Այո՛, այս ճշմարտութիւնն անհասկանալի էր ինձ այն ժամանակ, ե՛ս, ե՛ս միայն էի անգործ արարածը այն ընդարձակ տարածութեան մէջ, ուր ամէն մարդ զբաղոած էր իր աշխատանքով: Ո՞վ գցեց ինձ այն մոլորութեան մէջ, ո՞վ սպանեց իմ մէջ աշխատասիրութեան եռանդը: Ես մտաբերեցի հայր Թոդիկի վարդապետութիւնը, որ նա մեկնում էր իր աշակերտներին իր բուն բառացի իմաստով. «մարդը պէտք է երկնքի թռչունների նման ապրէ, որոնք ոչ վարում են, ոչ ցանում են եւ ոչ հնձում են, բայց միշտ կուշտ են, աստոած հասցնում է նրանց կերակուրը»: Այդ խօսքերը նա իր գլխից չէր դուրս տալիս, դրանք գրքից առած խօսքեր էին: Հիմնոելով յիշեալ բնաբանի վրայ, տէր-հայրը ընդարձակում էր այն միտքը, «թէ պէտք չէ հոգ տանել այս աշխարհի կեանքի համար, նա ունայն եւ անցաւոր է, թէ իւրաքանչիւր մարդու համար աստոած նշանակել է նրա օրական պարէնը (ապրուստը), մէկին շատ, մէկին քիչ. նոյնը կհասցնէ նա անընդհատ կերպով եւ չի թողնի իր արարածը քաղցած մնայ: Մարդից, իրանից, ոչինչ կախոած չէ, որքան եւ ջանք գործ դնէր, դարձեալ նա չէ կարող մի մազաչափ աւելացնել, կամ պակասացնել ապրուստի այն չափից, որ նշանակել է նրա համար աստոած»:

Քահանայի վարդապետութիւնը եւ Հասօի խօսքը ծնուցին իմ մէջ երկու միմեանց հակառակ գաղափարներ. մէկը անհոգութիւն եւ յոյս դնել աստուծոյ նախախնամութեան վրայ. միւսը՝ գործունէութիւն եւ յոյս դնել իր աշխատող ձեռքերի վրայ: Որ՞ն էր դրանցից ճշմարիտը. ես որոշել կարող չէի, միայն մտածում էի՝ թէ քահանայի ասածը պէտք է որ ուղիղ լինի, որովհետեւ տեսնում էի՝ մարդիկ այնքան աշխատում էին, կաշուց դուրս էին գալիս, դարձեալ մնում էին աղքատ: Երեւի, ասում էի ես, նրանց ապրուստը այնպէս քիչ է նշանակած, որ նրանք երբեք չեն կարող լինել ապահոված: Իսկ աղան կը մնայ միշտ աղա, որովհետեւ նա ոչ վարում է, ոչ ցանում է, ոչ հնձում է, եւ նրա սեղանը միշտ լի է եւ ճոխ...